**Տեղեկատվության տրամադրման դիմումների առցանց ներկայացման ուղեցույց**

1. Անհրաժեշտ է մուտք գործել www.e-cadastre.am կայք:




2. Գրանցված լինելու պարագայում անհրաժեշտ է մուտքագրել Ձեր էլեկտրոնային հասցեն և գաղտնաբառը: Եթե գրանցված չեք համակարգում, ապա կարող եք գրանցվել հետևյալ հղմամբ «https://www.e-cadastre.am/customer/login» կամ օգտվել հարթակի «Ուղեցույց» բաժնի «Ինչպես գրանցվել www.e-cadastre.am կայքում» ենթաբաժնից «Հղում»:


հայ/рус/eng
Մուտք
ԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՏՈՒՅՄԱՆ ՀԱՐԹԱԿ
կադաստրի կոմիտե
ՄԱՐԶԵՐ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
ՔԱՐՏԵԶ
ԿԱՅՔԻ ՔԱՐՏԵԶ
ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
Մուտք համակարգ
Էլ. հասցե
Գաղտնաբառ
Մուտք
Մոռացե՞լ եք գաղտնաբառը
Գրանցում

3. Դիմումներ մուտքագրելու համար անհրաժեշտ է մուտք գործել «Տեղեկատվության տրամադրում» բաժին:




4. Բաժինն ընտրելուց հետո բացվում է ստորև նշված պատուհանը:




5. Պատուհանը բացվելուց հետո անհրաժեշտ է ընտրել Ձեր կողմից պահանջվող տեղեկատվության տեսակը:
6. Տեղեկատվության տեսակն ընտրելուց հետո անհրաժեշտ է ընտրել «Ստանալ տեղեկատվությունն անվճար» կամ «Ստանալ տեղեկատվությունը վճարովի»

տարբերակներից մեկը: Ֆիզիկական անձանց (կամ նրանց կողմից լիազորված անձանց) կամ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց գույքի կամ գույքային իրավունքների մասին հայցվող տեղեկությունը տրամադրվում է անվճար՝ 3-րդ աշխատանքային օրը: Այդ դեպքում դիմումը պետք է հաստատվի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մնացած բոլոր դեպքերում անհրաժեշտ է ընտրել «Ստանալ տեղեկատվությունը վճարովի» տարբերակը:




7. «Ստանալ տեղեկատվությունը վճարովի» տարբերակն ընտրելուց հետո դիմումի մուտքագրման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է լրացնել անշարժ գույքի միավորի հասցեի համար նախատեսված դաշտերը: Անհրաժեշտ է մուտքագրել իրավունքների պետական գրանցման վկայականի համարը կամ կադաստրային ծածկագիրը և սեղմել «Փնտրել» կոճակը: Սեղմելուց հետո ինքնաշխատ կերպով կլրացվեն գույքի հասցեի համապատասխան դաշտերը: Կադաստրային ծածկագրով որոնման դեպքում, եթե միավորի նույնականացումը չի իրականացվում տեքստային բազայի միջոցով, ապա նույնականացումը կիրականացվի կադաստրային քարտեզի միջոցով և կարտացոլվի հետևյալ հաղորդագրությունը՝ «Հարգելի՛ դիմումատու, տվյալ կադաստրային ծածկագրով միավորը նույնականացվել է կադաստրային քարտեզի միջոցով»: Եթե չունեք իրավունքների պետական գրանցման վկայականի համար կամ կադաստրային ծածկագիր, ապա անհրաժեշտ է մուտքագրել անշարժ գույքի միավորի հասցեն (ամբողջապես կամ մասամբ) և նույնպես սեղմել «Փնտրել» կոճակը: Առաջարկվող հասցեների

ցանկից անհրաժեշտ է ընտրել Ձեր կողմից փնտրվող հասցեն, որն ինքնաշխատ եղանակով կարտացոլվի համապատասխան դաշտերում:




8. Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Հաջորդը» կոճակը:



9. «Դիմումի կատարման ժամկետը» դաշտում անհրաժեշտ է ընտրել դիմումի կատարման օրերի քանակն՝ ըստ վճարման չափի: Իսկ «Լրացուցիչ նշումներ» դաշտը հնարավորություն է տալիս ըստ ցանկության ներակայացնել դիմումին առնչվող հավելյալ տեղեկատվություն:




10. Հարկ է նշել, որ եթե ընտրվել է «Այլ տեղեկատվության տրամադրում» դիմումի տեսակը, ապա «Լրացուցիչ նշումներ» դաշտում պարտադիր անհրաժեշտ է նշել հայցվող տեղեկատվության էությունը որոշելու համար անհրաժեշտ տվյալներ (կատարել ստույգ հարցադրում պահանջվող տեղեկատվության վերաբերյալ):



11. Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Հաջորդը» կոճակը:
12. Հաջորդիվ բացվող «Ներկայացվող փաստաթղթեր» դաշտը լրացվում է ըստ անհրաժեշտության:




Եթե ցանկանում եք Ձեր կողմից ներկայացվող դիմումին կցել որևէ փաստաթուղթ, ապա անհրաժեշտ է «Փաստաթղթի տեսակ» դաշտում ընտրել ներկայացվող փաստաթղթի տեսակը, որից հետո անհրաժեշտ է վերբեռնել ներկայացվող փաստաթուղթը: Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Պահպանել» կոճակը:




13. «Պահպանել» կոճակը սեղմելուց հետո ակտիվանում է վճարման համար նախատեսված բաժինը: Վճարումները կատարվում են e-payments.am պետական վճարումների էլկտրոնային համակարգի միջոցով: Վճարումները կատարվում են 3 տարբերակով.



14. **Տարբերակ 1-ին.** Եթե սեղմեք «Ցանկանում եք շարունակել»-ի ստորին հատվածում նշված «Այո»-ն, ապա համակարգը Ձեզ կուղղորդի e-payments.am պետական վճարումների էլկտրոնային համակարգ, որտեղ կարող եք կատարել վճարումներ՝ լրացնելով Ձեր բանկային քարտի տվյալները, հաստատել վճարումը, sms հաղորդագրության միջոցով ստացված կոդը




լրացնել համապատասխան դաշտում և հաստատել գործարքը:

**Տարբերակ 2-րդ.** Եթե վճարումը նախապես կատարվել է e-payments.am պետական վճարումների էլկտրոնային համակարգի միջոցով, ապա անհրաժեշտ է սեղմել «Ցանկանում եք մուտքագրել»-ի ստորին հատվածում նշված «Այո»-ն, որից հետո կբացվի վճարման ծածկագիրը լրացնելու դաշտ: Այստեղ անհրաժեշտ է լրացնել Ձեր կողմից e-payments.am պետական վճարումների էլկտրոնային համակարգի միջոցով նախապես կատարված

վճարման անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը՝ սեղմելով խոշորացույցի նշանի վրա:




**Տարբերակ 3-րդ** Էլեկտրոնային ծառայությունների հարթակի դիմումի մուտքագրման “Վճարում” փուլում ստեղծվել է “CLIENT-TREASURY վճարումների էլեկտրոնային համակարգ” էջը, որտեղ պետք է մուտքագրել գանձապետական հաշիվներին կատարված վճարման/պետտուրքի անդորրագրի համարը և վճարված գումարը և սեղմել “Որոնել”: Եթե անդորրագիրը վավեր է կներկայացվի Ձեր անդորրագրի էլեկտրոնային անդորրագիրը, որը պետք է “Կցել” դիմումին և “Հաստատել”:


ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ
կադաստրի կոմիտե
ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ՄԱՐԶԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶ ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ
Դիմումի ընդունում
Փաստաթղթերի վերբեռնում
Վճարում
Վճարման նեքակա գումարը կազմում է 1000 ՀՀ դրամ
Ցանկանու՞մ եք շարունակել:
Այո
Դիմումի վճար
Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ
CLIENT-TREASURY վճարումների էլեկտրոնային համակարգ
Եթե վճարումը նախապես կատարվել է www.e-payments.am պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա կարող եք օգտագործել վճարման անդորրագիրը մուտքագրելով 20 նիշանոց ծածկագիրը:
Ցանկանում եք մուտքագրել:
Այո
Ոչ
Վճարման նեքակա գումարը կազմում է 1000 ՀՀ դրամ


Վճարման անդորրագիր
*******************************
ԱՆԴՈՐՐԱԳԻՐ
Վճարմ. հանձնարարական 231116090378000
Բանկ ՀՀ ֆինանսների նախարարություն
«CLIENT-TREASURY» համակարգ
Հաստատման ամսաթիվ 2023-11-16
*******************************
Վճարման նպատակ՝
ծառ. վճար/ք. Չարենցավան[redacted]
Վճարման ամսաթիվ՝ 2023-11-16
Անդորրագրի համար՝ 231116090378000
Գումար՝ 25000 դրամ
Անունը կամ անվանումը՝ [redacted]
Վճարողի հաշիվ՝ 15[redacted]
Ստացողի հաշիվ՝ 900013220018
*******************************
Վճարումը թույլատրված է
*******************************
Ձեր վճարումն ընդունված է
*** Շնորհակալություն ***
Կցել
Փակել
Վճարված գումար*
25000
Որոնել

Արդեն իսկ օգտագործված անդորրագրի տվյալներ մուտքագրելու դեպքում կստանաք հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ՝ “Վճարման անդորրագիրն արդեն իսկ օգտագործվել է”:




Ծառայության համար պահանջվող գումարից պակաս տվյալ մուտքագրելու դեպքում համակարգը թույլ չի տա անդորրագիրը կցել դիմումին, ավելի մեծ գումար պարունակող անդորրագրի դեպքում կստանաք հաղորդագրություն տվյալների անհամապատասխանության վերաբերյալ՝ անդորրագիրը կցելու հնարավորությամբ




15. Վճարումը հաստատելուց հետո Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին կստանաք Ձեր կողմից իրականացված վճարումը հաստատող անդորրագիր և դիմումի ընդունման վերաբերյալ ստացական:
16. «Ստանալ տեղեկատվությունն անվճար» տարբերակն ընտրելուց հետո դիմումի մուտքագրման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է լրացնել անշարժ գույքի միավորի հասցեի համար նախատեսված դաշտերը: Անհրաժեշտ է մուտքագրել իրավունքների պետական գրանցման վկայականի համարը կամ կադաստրային ծածկագիրը և սեղմել «Փնտրել» կոճակը:

Սեղմելուց հետո ինքնաշխատ կերպով կլրացվեն գույքի հասցեի համապատասխան դաշտերը: Եթե չունեք իրավունքների պետական գրանցման վկայականի համար կամ կադաստրային ծածկագիր, ապա անհրաժեշտ է մուտքագրել անշարժ գույքի միավորի հասցեն (ամբողջապես կամ մասամբ) և նույնպես սեղմել «Փնտրել» կոճակը: Առաջարկվող հասցեների ցանկից անհրաժեշտ է ընտրել Ձեր կողմից փնտրվող հասցեն, որն ինքնաշխատ եղանակով կարտացոլվի համապատասխան դաշտերում: Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Հաջորդը» կոճակը:

17. «Լրացուցիչ նշումներ» դաշտը հնարավորություն է տալիս ներակայացնել դիմումին առնչվող հավելյալ տեղեկատվություն (ըստ ցանկության): Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Հաջորդը» կոճակը:
18. Հաջորդիվ բացվող «Ներկայացվող փաստաթղթեր» դաշտը լրացվում է ըստ անհրաժեշտության: Եթե ցանկանում եք Ձեր կողմից ներկայացվող դիմումին կցել որևէ փաստաթուղթ, ապա անհրաժեշտ է «Փաստաթղթի տեսակ» դաշտում ընտրել ներկայացվող փաստաթղթի տեսակը, որից հետո անհրաժեշտ է վերբեռնել ներկայացվող փաստաթուղթը: Նշված գործողությունները հաստատելու համար անհրաժեշտ է սեղմել «Պահպանել» կոճակը:
19. Հաջորդիվ անհրաժեշտ է ներբեռնել համակարգի կողմից գեներացված դիմումը, հաստատել այն էլեկտրոնային ստորագրությամբ և վերբեռնել համակարգ: Հարկ է նշել, որ էլեկտրոնային ստորագրություն ահանջող

վերբեռնվող փաստաթղթերը պետք է ունենան «PDF» ձևաչափ:




20. Հարթակի «Դիմումների ցանկ» բաժնում կարող եք տեսնել Ձեր կողմից մուտքագրված դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը:



21. Դիմումի պատասխանը պատրաստ լինելու դեպքում կից ներկայացված փաթեթի ցանկում կավելանա «Ավարտական փաստաթուղթ» տողը, որն ընտրելով կարող եք ծանոթանալ դրան և ըստ անհրաժեշտության տպել այն:




22. Համակարգը հնարավորություն է տալիս առցանց ծանոթանալ և ըստ անհրաժեշտության տպել ցանկացած ավարտական փաստաթուղթ 2 տարբերակով.



**Տարբերակ 1-ին. .** ստացականում նշված դիմումի բանալին և գաղտնաբառը «[Դիմումի ընթացք]» բաժնի համապատասխան տողերում լրացնելու դեպքում:




**Տարբերակ 2-րդ.** լրացնելով ավարտական փաստաթղթի համարը և գաղտնաբառը «[Փաստաթղթերի դիտում]» բաժնի համապատասխան տողերում:

